

ԱՅԼԵՆԻՍՏԻԿ**ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՕԶԻՏՈՐՆԵՐ**

(20-րդ դար)



(Շարունակութիւն տես Բազմավէպ, 1926 էջ 274)

Ա.

ԺԱ. ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԻՆՓՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ծնւել էմ Տաճկահայաստանում Երզնկայի Մեծ Ագրակ գիւղում 1878 թւին, Հայրս, որ արհեստով սափրիչ էր, գործի անյաջողութեան պատճառով անցաւ Պաթում, այնտեղից՝ Թիֆլիս և ինձ տեղեց Ներսիսեան դպրոցը։ Յետագայում ստիպւած եղայ Թողնել դպրոցը V-րդ դասարանից և ինձ համար ապրուստի միջոց որոնել։ Այսպէս երգեցիկ խմբեր կազմել ու համերգներ տալ Թիֆլիսում ու հիւսիսային Կովկասում։

1897-1900 թւին հրաւիրւեցի Վլադիկաւկազ, ապա Թիֆլիս իրրեւ եկեղեցական խմբավար, որը սակայն աննշան անցաւ։ Այդ ժամանակ դեռ սկսնակ էի և անել էի Եկմալեանի ու Կարա-Մուրզայի մօտ։

1899 թւի վերջին հրաւիրւեցի Վլադիկաւկազ եկեղեցական խմբապետի պաշտօնով, ուր սկսեց և իմ հասարակական գործունէութիւնը, իրրեւ կօնցերտանո հայ երգի պրօպագանդի, իմ ուսուցիչ Կարա-Մուրզայի օրինակով։ Վլադիկաւկազում իմ ունեցած գործունէութիւնը նոյնպէս անցաւ աննշան։ Առհասարակ այդ թւականներին իմ երաժշտական-հասարակական գործունէութիւնն եկեղեցական խմբապետի և քառամայն խմբերով համերգներ կազմակերպելու մէջն էր կայանում. և այդ բովանդակութիւնն էլ ունէր իմ երաժշտական գործունէութեան առաջին շրջանը, մինչև 1905 թիւը։

Ուշագրաւն այն է, որ Վլադիկաւկազում կազմած միջազգային խմբով (հայ, ռուս, վրացի, օսեթին) եւ 1902 թւին երաժշտական սուրն կատարեցի մինչև Եկատերինաուպօլ և չորս լեզուով (նոյնիսկ օսեթէն) առաջին անգամ բնմի վրայ խմբական երգը հնչեցրի։

1903-5 անցայ Պետերբուրգ և կատարելագործւեցի երաժշտական գիտութեան մէջ։ 1905 թւին վերադառնալիս հայ դպրոցները, Նոյն 1905-6 ուսում տարին եւ հաստատւելով Թիֆլիս, Թեալիսիցի իմ գործունէութեան երկրորդ շրջանը։

Այս շրջանի իմ երաժշտական գործունէութեան կենտրոնը մանկավարժական գիծն է հանդիսանում։ Նորաշէնի և Գալիանեան օրիորդաց և ուրիշ դպրոցներում երկար տարիներ պաշտօնավարելով, իրրեւ երգի դասատու, զգացել եմ այն ծանր ազդեցութիւնը, որ մանուկների վրայ ունեցել են եկեղեցական և նման անմատ

չելի երգերը: Եւ դրանց զիմաց այն օրգանական պահանջը, որ ունէր մանուկը ղէպի « սիրուն շնիկ »ը, « ծիտիկ »ը և « Զազուկի երգը »: Ուստի իմ գործունէութեան առանցքը հայ դպրոցներում մանկական երգերի և երգեցողութեան առարկայի մշակման շուրջ կենտրոնացրի: 1908 թւին հրատարակեցի « փնչիկ » մանկական երգերի ժողովածուն: 1910-14 թւերին (իմ և Ռոմ. Մելիքեանի ղեկավարութեամբ) Թիֆլիսում հայ դպրոցների երգեցողութեան դասատուներին և երաժշտատէր երիտասարդներին մէջ երաժշտական շարժում առաջ բերելը « Երաժշտական յիգա » անւան տակ, 1914 թւին (իմ և Ռոմ. Մելիքեանի աշխատակցութեամբ) « Երաժշտական դպրեհարան » դասազրքի հրատարակութիւնը և վերջապէս նոյն թւին « փնչիկ » մանկական երգերի իմ ինքնուրոյն աշխատանքների հանդէս բերելը (չորս գրքոյկ Ռոմ. Մելիքեանի խմբագրութեամբ) արդէն գրաւական են այդ շրջանին իմ գործունէութեան և ամպլուայի որոշմանը՝ իբրև երաժշտ-մանկավարժի և իբրև մանկական-երաժշտագրողի:

Իմ գործունէութեան երրորդ և ներկայ շրջանը մանկավարժական-գրական և նորից հայ երգի պրօպագանդի շրջանն է: Այս անգամ արդէն յենակէտ եմ ունեցել դպրոցը և դպրոցական մանուկը Հայաստանում և Հայաստանից դուրս:

1921 թւին Խորհրդային Հայաստանում դպրոցական երաժշտութեան կենտրոնական հրահանգչի պաշտօնն ունէի: 21-23 ուսում. տարիներին շրջելով Երևան, Լենինական, Ղարաբաղիս, Դիլիջան և Ստեփանաւան (Վալալ օլլի) հայ-ուսու երգեցողութեան դասատուներին համար կազմակերպեցի երգի արագընթաց դասընթացներ, փորձնական դասեր և նրանց կից մանկական ցուցադրական համերգներ:

1923 թւին կազմակերպեցի Երևանի « Կենդ. բանտարակսն ակումբի » առաջին բանտարակսն խումբը, ուր մշակեց իմ առաջին յեղափոխական-բանտարակսն երգերը:

1923-25 թւերի ամառային և աշնանային ամիսներին հայ երգի գործն եմ վերցրել ինձ վրայ և նորից շրջելով Հիւսիսային Կովկասի քաղաքները, ինչպէս Գրագնա, Վլադիկաւկազ, Մոզդակ, Կիսլովոդոկ, Արմաւիր, Պրիկովսկ, Կրասնոտար, Նոր-Նախիջևան և կազմակերպել եմ, այսպէս կոչւած, « հայ երգի երեկոներ »՝ դպրոցական և արտադպրոցական ուղղութեամբ, ծրագիր ունենալով հայ ժամանակակից երաժշտների, մանկական, գեղարեստական ստեղծագործութիւնները, ժողովրդական գրականութիւնը և իմ « Կարմիր երգեր » սէրիայից յեղափոխական-բանտարակսն երգերը:

Իւրաքանչիւր քաղաք մտնելուս երրորդ օրն արդէն ունենում էի 100-150 հոգուց բաղկացած մանկական և 100-ից աւելի մեծերի բազմաձայն խումբ, որոնք ամենակարճ ժամանակամիջոցում (15-20 օր) իւրացնում էին առաջադրած ծրագիրը և ամենայն յաջողութեամբ ցուցադրում հայ երգի երեկոն, բաւականութիւն պատճառելով ունկնդր հասարակութեան և նոյնիսկ օտարազգիներին (ռուս, վրացի, հրէայ), որոնք մեծ հետաքրքրութիւն էին ցոյց տալիս ղէպի հայ երաժշտութիւնը:

Իմ երաժշտական-հասարակական գործունէութեան մասին այսպէս գրիւոց յետոյ՝ այժմ առաջ բերեմ գրական աշխատանքների պատկերը:

Ա. Տպագրւած

1. « փնչիկ » մանկական երգերի ժողովածու, 1908:
2. « Երաժշտական Ալլոբեհարան », դասագիրք, լոյս է տեսել 1914 թւին իմ և Ռոմ. Մելիքեանի խմբագրութեամբ:

8. « Փնջիկ » մանկական երգերի, ինքնուրույն աշխատութիւն, լոյս է տեսել 1914 թւին Ռոմ. Մելիքեանի խմբագրութեամբ:

4. « Երեք խմբեր » , ՄԻՔ. Նալբանդեանի երգերից, նրա մահան յիսնամեակի առթիւ. լոյս է տեսել 1916 թւին:

5. « Յեղափոխական երգեր » (Թարգ. Յակ. Յակոբեանի), 1917:

Բ. Անտիպաները

1. « Փնջիկ » , նախադպրոցական մանուկների համար:

2. « Փնջիկ » , երկնային մանկական երգերի:

3. « Փնջիկ » , երկնային մանկական երգերի:

4. « Փնջիկ » , երկնային ժողովրդական երգերի:

5. « Քառամայն խմբերգներ

6. Մեներգներ, դուէտ և տրիոներ:

7. Մանկական օպերաներ՝

ա, « Զարի վերջը »

բ, « Միթէ՞ ինձ չէք սիրում »

գ, « Անտառի փէրին »

8. « Կարմիր երգեր » , յեղափոխական-բանտարական երգերի առաջին տէրիա, որի մէջ մտնում են. 1) « Ինտերնացիոնալ », 2) « Լենինին », 3) « Կարմիր զարնան », 4) « Թող հնչեն », 5) « Դարբնոց », 6) « Մէկն Մայիսեան հիմը », 7) « Կարմիր հոկտեմբեր », 8) « Սուլիշ », 9) « Պատգամական քայլերգ », 10) « Մուրճն ու բանտարները », 11) « Յեղափոխութիւն », 12) « Մահերգ »:

Բ.

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔՆ ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Ա. « Մշակ », 1902 թ. N. 139

Յունիսի 28-ին տեղիս վաճառականների ակումբիցի ամսաբային դահլիճում կայացաւ մեր խմբապետ Պ. Ա. Մանուկեանի նամերգը իր խմբով: Համարողի ծրագիրը բառական բազմազանի էր և նեղաբացական: Բացի նախընտրեալ երգերից՝ ծրագրում կային ուսերէն, վրացերէն և օսերէն երգեր: Սերէն երգերը առաջին անգամն են ընձ գրում՝ վերածածտ երաժշտութեան՝ շնորհիւ Պետերբուրգի կոնսերւատօրիայի ուսանող Պ. Մամուկեանի. այդ պատճառով նամերգը զբաղել էր ունեւորիներին մեծ բազմութիւն: Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր: Հայերէն երգերից կրկնութեան և բուն ժափանաութեան արժանացան Կարա-Մուրզայի « Բամ փորտաանը » և Չան գիւլումը: Բառական աշուղ էր և լսւ երգից Պ. Մանուկեանի ներդաշնակած երգերից « Հերից որգահաք », ի դուր են »-ը և վրացերէն « Մերցիսալ » երգը: Ինչ վերաբերում է օսերէն երգերին, ա. Գ. Օթարեանը աղողութեամբ երգեց օսերէն կիմը, ներքաւ Ս. Գէորգին խմբական ձայնակցութեամբ: Միացածները պարերգեր էին, որոնց մեծ զուցցում պատճառեցին: Պ. Մանուկեանն ստացաւ մի նւէր:

Վարդիկապազ

Բ. « ՏԱՐԱԶ », 1904 թ. N. 5

Ստաւրօպոլ 19 Յունւար. — Ամսոյս 8-ին խմբապետ Պ. Ալաա Մանուկեանն այստեղի նախարանական ժողովարանի դահլիճում տեղիս նախկին նամերգ: Պէտք է նկատած, որ Ստաւրօպոլում ընդամենը եղի է միայն երեք նախկին նամերգ, որոնցից առաջինը տեղի է աշուղիս խմբերգների կիմաղիլը մեղանում: Կանգունայի Կարա-Մուրզա, որը փայլուն աղողութիւն է ունեցել: Ապա տեղեւ աշնան, մի նամերգ տեղի Պ. Մանուկեան, որը նախկին նամերգերի է տեղի Հիւսիսային կողմիս նամարեա թուր նայաքանի քա-

դաջեմբում: Այժմ նոյն պարունը այստեղ տեղ էր երկրորդ համերգը: Երկու սեռի խումբը և տ. տ. Երզնա-
հանի, Տեր-Յովհաննեսի և Մուրադիանի սոյո երգեցին 15 աղավյին և ժողովրդական երգեր և մի կտոր
«Շուշան» օպերայից... համերգը ընդանրապես այդպեանց անցաւ: Մի քանի թէ խմբական և թէ սոյո երգեր
կրկնել տեղեկ հասարակութիւնը, մանաւանդ զինչեցիկ երգեցիկ ժողովրդական կտորները — «Առաջագոյն-Երմա-
հան» և «Ջամ-Կրկում», իսկ «Շուշան-Երմա» ուղղակի սքանչելի էր: Միւս երգերից այնպէս էին «Թե Բե
ուհի», «Ան, իմ սիրելի» և «Հայաստանի տրեգիկ»:

ՍԱԼ

Գ. «ՀԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 1916 Թ. N. 44

«Փնիկ», Ազատ Մանուկեանի. — Լոյս են տեսել շատ տեսարկ մանկական երգեր Ազատ Մանու-
կեանի: Խմբագրութեամբ երաժիշտ Ռ. Միլիքեանի, հրատարակութեամբ Պ. Լ. Եւանդուկեանի. շաղկիկներ
հրատարակուողները նկարել վ. Սուրենյանիին են:

Ա. Մանուկեանը յայտնի երաժիշտ-մանկավարժ է. նա լաւ է հասնում մանկական երգին, հաշիւը, պա-
հանքները և զգաւարկական պատրաստութիւնը, ուստի կարողացել է այդ բոլորին համապատասխան յայնդ
այիստեսութիւն գրել, փայլուն կերպով լուծելով այն ծանր խնդիրներէն, որոնք ամենակարեւորներէն
մինը, որոնք նաեւ երաժիշտը կանգնած են իր հայ երաժիշտներին առաջ և պատում են լուծման:

Նախ և առաջ ուշագրութիւն են դրում երեք զինչեցիկ երգ, հայոց ժողովրդական երգերի երանգով
(կորիքի) զբաւ. «Արագիլ բարով կկար» (Ա. տեսք. N. 7), «Եյ շան անցան» (Գ. տեսք. N. 6) և
«Եկաւ զարուն» (Գ. տեսք. N. 3):

Հետաքրքրական է երաժշտական ծրագրի (Programm musik) կողմից «զու, զու, զու» (Բ. տեսք.
N. 5) երգը, որի մէջ ներկայացրած են նմանակներ ժողովրդական երգի, թուրքական երգի, իսկ
Նոյն տեսքի N. 1. «Երեւոյնից բուն է շինում», զբաւ «Բե-փոլը» (F-moll) ձայնատեսակով յու-
ղիւ է սրտաշարժ երգ է: Ելել է նաեւ երգի հայտնակի այնչեղ զինք, անշուշտ նմանութիւն կը գտնենք այդ
զինքի է Երեւոյնից օգի մէջ հայտնակի, իսկ ներդաշնակութիւնը չլինելով է թեկերի շարժումը:

Երաժշտական ծրագրին նկատելը մտնելով մեզ այդ երգը հայ ժողովրդական երգին, վստահ զի այդ կողմը
լաւ բնական է մեր հայ երգերին, և հասնում է այնտեղ ըստի որ տարբերակ զարգացման:
Իւր արտաքին ձեւով մտնելով է ժողովրդական ոճին (stil) նաեւ «Լուսինն եկաւ էն սարէն» (N. 5,
տեսք. Բ.), լինելով իր առաջին մասում ծանր և երկրորդում աշխոյժ:

Ինչո՞ւն է այդպիսի մասում ծանր և երկրորդում աշխոյժ: «Պապի տատի»-ն (Ա.
տեսք. N. 4) իրենց հետաքրքրական շնորհով (Accente) և «Լուսն լուսացաւ» իր վերջին լուսնով
(kadencia):

Իսկական ազգայնից ցոյց է տեսել երաժշտագրողը սքանչելի «Քարի լուսի» (Գ. տեսք. N. 1) երգի մէջ,
ի նկատի ունենալով թէ մեղեդին (եղանակը, է-փոլը (d-moll) ձայնատեսակով զբաւ, թէ ներդաշնակու-
թիւնը և թէ զգաւարկական նկարագրութիւնն այդ քնքշող մեղամազմոտ տրամադրութեանը, որ մենք
ստանում ենք արշալույսի բացեցում առաջին վայրկեաններին:

Յսեալով կը լինէր, որ ամանակի (Tempo) չափերը հայերէն կամ իտալերէն տեմպոներով լինէին նա-
խկան, և նոյնն էլ ուժի (Dinamik) նշանները վերաբերմամբ:

Վերջը մի քանի խոցը տալուային զինք մասին: Մեր հայոց թէ հինգեցական և թէ ժողովրդական երգերի
մէջ երաժշտական շնորհ և վստահ շնորհ երաժիշտ միշտ իրար համապատասխան են. նկատում է անբա-
ժանելի մի կապ, և այդ նկատում է նաեւ Ա. Մանուկեանի երգերում, բայց ձայնազերի մի քանի գեղ-
քում երաժշտագրողը տալուային զինքը այնպէս է զեռնել, որ մեղեդին ստանում է ուրիշ շնորհ, որոնց
եղանակի պարզութիւնը խաղաղութիւն են. զոր օրինակ «Պապի տատի» չալ իսկին է եղանակի շնորհ և վստ-
հիւրի շնորհը երաժիշտական տեսանկյունով են, այսինքն շնորհում են երկրորդ, չորրորդ և հոթերորդ վստ-
հիւրը, բայց ձայնազբաւ է այնպէս, որ մինը խոցերը չիմանալով պէտք է եղանակը նաեւ լինի շնորհ ա-
ռաջին, երրորդ, կնիւրորդ և հոթերորդ վստհիւրը, որ երաժշտագրողի ուղածին չի համապատասխանում:

Այս սխալը եւ նկատել իմ յայտնի մեր հայ երաժշտագրութեան մէջ, ասկայն այդ առթիւ մի ուրիշ
տեսքով:

Իսկ առ այժմ ցանկանալով Պ. Ազատ Մանուկեանին յալուային, սիրում ենք հաստատել, որ այդ
զինչեցիկ երգերը, ըստի հայ զարգացմանը, մտաւ կը զորին և հայ ընտանիքներում, մանաւանդ այն ընտա-
նիքներում, որոնք երեւանից զուրկ են հայ մանկական երգերից:

ԹԻՖԼԻՍ, 1916.

ՈՒՍՏԱՆԱ ՏԵՐ-ԳԻՐԳՈՐԵԱՆ

9.

Յ Ո Ւ Ե Լ Ե Ա Ն

ԵՐԱՇԵՏԱԿԱՆ ՏՐՆ. — «Հայ Երաժշտութեան Աշխատանքների Միութիւնը» իր վաստակաւոր անգամ Ազատ Մանուկեանի երաժշտական-գրական գործունեութեան 25-ամեակի առթիւ, Ռաբաթ, Մայիսի 4-ին, Թիֆլիսում կազմակերպում է պատուոյ օր: Այդ օրը Թիֆլիսի նայ երաժշտագէտները նամարում են նաեւ մեր գաղութական մանկական երաժշտութեան տանը: Յանձին Ազատ Մանուկեանի մեր գաղութական երաժշտական գրականութիւնն ունի իր լուսազոյն գեմբերից մէկը, որի գրառքներով անում ու զատաբարակում է մեր ծագիկ երիտասարդութիւնը:

«Հայ Երաժշտութեան Աշխատանքների Միութիւնը», կազմակերպելով այդ օրը, նրաւէր է կարգում իր անգամներին, կրթական նստաստութիւններին և մեր երաժշտութեան բարեկամներին՝ իրենց մասնակցութեամբ պատել այդ օրը, որը տեղի կ'ունենայ ցերեկը, Ռուսթաւելու թատրոնում, իսկ զինքը 2-րդ կոնսերտատորիայի սրահը:

«Մարտակոչ»,
1923 N. 53.

«Հայ Երաժշտութեան Աշխատանքների
Միութեան կազմակերպելով յանձնառուով»

«Կարմիր ծիւեր», 1923 N. 2. Թիֆլիս

«Ազատ Մանուկեան». — Այս տարի լրացաւ Ազատ Մանուկեանի երաժշտական և մանկավարժական գործունեութեան քսան և կնիսնամեակը, որի յարգանքով Թիֆլիսի նայ աշակերտ-աշակերտուհիները առնեցին այս Մայիսին:

Թիֆլիսի և Հայաստանի զանազան վայրերի նայ մանուկներին լուս ծանօթ են նրա նեղինական «Զարի վերջը» մանկական ոպերան, «Մաղիկների մէջ» պարեգանակը և այլն:

... Զգալով մանկական երգերի մեծ պակասութիւն, նա սկսում է այդ ուղղութեամբ աշխատել: Կազմում է «Փնջիկ» մանկական երգերի մաղմածուն, որը առարձակում է շատով, իսկ երաժիշտ Ռոմ. Մելիքանի նմ կազմում է «Երաժշտական ոպերաներ»:

Մանկական երգերի պակասից օր օրի վերայ աւելանում էր, և ահա Ա. Մանուկեանն ընդ առաջ զգալով այդ պակասը, նրառարկում է «Փնջիկ» մանկական երգերի չորս տեսակը Ռ. Մելիքեանի խմբագրութեամբ: Դպրոցական նոնդաների և ներկայացումների նամար նա զրել է «Զարի վերջը» մանկական ոպերան, «Միթէ ինձ չէք սիրում» պատկերը և այլ բազմաթիւ երգեր, որ սիրով երգում են գաղութներում և նոնդաներում: Բացի Վայենեանի և Նորաշենի գաղութներից, նա ուսուցչութիւն է արել նաեւ III-րդ արա. կան և իշական զեմագրիաներում ու 94-րդ աշխատանքային գաղութում:

Երբ Հայաստանում նստասուից խորրդային կառավարութիւնը, Ազատ Մանուկեանը նրաւերեց այն տեղի գաղութներում ու մանկաներում երգեցողութիւնը կանոնաւոր կնիքերի վրայ զնելու նամար, նա օրով կատարեց այդ պարտականութիւնը, և այսօր էլ անարտույն քաղաքի քաղաք, զինդից գնդ է շրջում սիրած զօրը նստասու կնիքերի վրայ զնելու նամար:

ՅԱՆ. ՅՈՎԱՆՆԵՍՅԱՆ

(Շարայարեցի)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

